հեստով փող էր վաստակում, ապրում էր ինքը եւ սնուցանում էր իր որբ թոռնիկին:

Կարոյի հետ ես ծանօթացայ մեր դպրոցում. այնտեղ բոլորը, բացի վարժապետից, սիրում էին նրան, թէեւ նա խիստ չար եւ անհանգիստ երեխայ էր: Չգիտեմ, որպիսի՞ զգացմունք կապեց իմ սիրտը այդ վայրենի վագրի ձագի հետ, որից ամէն օր մի փորձանք պակաս չէր լինում: Եւ ճշմարիտ, միշտ մի վէրք կարելի էր տեսնել նրա մարմնի վրայ. կամ ձեռքը վիրաւորուած էր լինում, կամ գլուխը կոտրած, կամ երեսը ճանկռած, վերջապէս միշտ անդամներից մէկը փաթաթուած էր լինում:

Թէեւ նա խիստ բարի սիրտ ունէր, բայց անկարելի էր բոլորովին մտերիմ լինել նրա հետ: Կարօն այն գազաններից էր, որին դժուար էր ընտելացնել: Այդ պատճառով, աշակերտների ակնածութիւնը դէպի նա ծագում էր աւելի երկիւղից, որ ունենում են տկարները դէպի իրանցից հզօրները: Եւ արդարեւ, Կարօն համարւում էր մեր դպրոցի մէջ խիստ սրտոտ, համարձակ եւ աներկիւղ աշակերտ:

Նա խիստ վատ էր սովորում, թէեւ ընդունակ եւ բնական ձիրքերով հարուստ տղայ էր: Նրա անհամբեր, անհնազանդ բնաւորութիւնը շատ անգամ առիթ էր տալիս զեղծումներ գործել դպրոցի խիստ կարգապահութիւնների դէմ. շատ անգամ եւս նա պատճառ էր դառնում աղմկալի խռովութիւնների: Գրգռելով աշակերտներին, յարուցանում էր նա ընդհանուր ապստամբութիւն վարժապետի դէմ: Այսպիսի դէպքերում նրան շատ օգնում էին Ասլանը եւ Սագօն. առաջինը իր խելքով եւ խոհեմութեամբ, իսկ երկրորդը՝ իր խորամանկութեամբ, որ սատանայի պէս մտնում էր աշակերտների դամարը եւ նրանց շուռ էր տալիս, որպէս եւ ցանկանում էր:

Ես մինչեւ այսօր չեմ կարող երեւակայել Կարոյի բնաւորութեան զօրութիւնը, թէ ինչպէ՞ս նրան յաջողւում էր ազդել այն ապուշ, վարժապետի ճնշումներից հոգով եւ սրտով սպանուած, աշակերտների վրայ, որոնց երեսից երկիւղը երբեք պակաս չէր լինում, որոնց վախկոտ աչքերի մէջ միշտ կարելի էր նշմարել կոյր հնազանդութիւն եւ ստրկութիւն: Բայց մարդկային ուժը իր մէջ աստուածային զօրութիւն ունի, որ ստիպում է տկարներին խոնարհոել իր առջեւ, որ իր անձը պաշտելի է կացուցանում: Կարօն ունէր այդ յատկութիւնները:

Կարծես երեխաների հասակում կատարւում է նոյնը, ինչ որ կատարոել էր ընդհանուր մարդկութեան տղայական հասակում: Ազգերի դիւցազունները, որոնց պաշտել է ամբոխը, որոնց անմահների կարգումն է դասել, եղել են նոյն ազգի քաջ հզոր տղմարդիկը, որոնք պատերազմում էին վիշապնե-